

ՄԱՏՍՈՒՐԻ

—Խնդրեմ սպասեցէք մի վայրկեան,— ասաց նա խորհրդաւոր ձայնով.— գնամ տանտիրոջը յայտնեմ ձեր գալը:

Եւ իսկոյն էլ վերադարձաւ ու ինձ վեր հրաւիրեց:

—Միայն խնդրեմ, հանէք կօշիկներդ,— յիշեցրեց ինձ սեմի վրա:

Ես հնազանդեցի ու գուլպաներով ոտք դրի ճիւնի պէս մաքուր խսիրի վրա: Ներս մտայ թէ չէ, մի հայեացք ձգեցի շուրջս, տեսայ, որ գտնուում եմ մի ընդարձակ սենեակում, լիքը հիւրերով: